ԴՈՒԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
և «Ավրորա Ռեզորթ Ծաղկաձոր» հյուրանոցի միջև

Վայրը ՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փող., 18/2 ՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ), ի դեմս տնօրեն՝ Գագիկ Գևորգյանի, մի կողմից, և «Ավրորա Ռեզորթ Ծաղկաձոր» հյուրանոցը (այսուհետ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Լևոն Բաղդասարյանի, մյուս կողմից (կազմակերպությունները միասին, այսուհետ՝ կողմեր), կարևորելով Հայաստանի Հանրապետությունում /մարզում/ Կոտայքի մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացումը և աշխատաշուկայի համալրումը միջին օղակի որակյալ մասնագետներով, կնքելով սույն փաստաթուղթը (այսուհետ հուշագիր), հաստատում են իրենց մտադրությունը ներքոնշյալ հարցերում:

1.Համագործակցության առարկան

Սույն հուշագիրը կարգավորում է կողմերի համագործակցությունը սոցիալական գործընկերության փոխազդեցության շրջանակներում պատրաստելու և վերապատրաստելու միջին օղակի մասնագետներին միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ ոլորտի և աշխատուշակայի պահանջներին համապատասխան:

2. Համագործակցության նպատակները

2.1 Կողմերը.

- Նպաստում են Կոտայքի մարզի ոլորտի տնտեսական զարգացմանը և գործազրկության նվազեցմանը:
- Դուալ ուսուցման ծրագրերի միջոցով պատրաստում են զբոսաշրջության ոլորտի միջին օղակի մրցունակ մասնագետներ՝ զարգացնելով տվյալ ոլորտի մարդկային ռեսուրսները:
- Հնարավորության սահմաններում աջակցում են դուալ ուսուցման ծրագիրը հաջողությամբ ավարտած մասնակիցներին աշխատանքի տեղավորմանը:
- Տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսներ և տեղեկատվություն ելնելով հուշագրի նպատակներից:
- Աջակցում են Կոտայքի մարզում գործող զբոսաշրջության ոլորտի ընկերություններին որակյալ մասնագետներով համալրմանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ

ք. Հրազդան, Կենտրոն 96

Գագիկ Գևորգյան

«Ավրորա Ռեզորթ Ծաղկաձոր» հյուրանոց

ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փող., 18/2

Լևոն Բաղդասարյան